Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Նոյեմբերի 14-ին. Թիֆլիս. №46.

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ



Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ. Վիմագրական Բիւրօ

*Երիտասարդ Թուրքերը եւ դաշնակցականները.—Ջանըմ թող էդ թագրիրները. Թող գրիչը քու է, այլեւ դու իրաւունք չունիս ոչ կրօնական գործերով զբաղուել. սահմանադրութիւնը կարող է վտանգուել...*

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ



…«Նրանք» շտապում են, որ սատկած էշից պայտերը գէթ պոկեն… էլի որ բան չլի՝ գրօշ հօ կարժենայ։




ՀԱՅԵՐԻՍ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

## ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1910 թ.

# 5 ՏԱՐԻ ԽԱԹԱԲԱԼԱ 5 ՏԱՐԻ

### Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն միակ գունաւոր պատկերազարդ հայ շաբաթաթերթն է:
«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն հրատարակւում է ռուսական և եւրոպական լաւագոյն թերթերի օրինակով:

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն շարունակւում է նոյն ուղղութեամբ, նոյն աշխատողների և զւարճ երգիծաբանների մասնակցութեամբ, ինչպէս և անցեալ տարիները:

**ՄԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ**

Գրիչն ու Թանաքը, Ներկն ու Հանաքը

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ՊԱԿԱՍ ՎՃԱՐՈՎ

## „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ"

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագիրը, որն այժմ լոյս է տեսնելու շաբաթը երեք անգամ, կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ, իսկ ապագայում ամեն օր:

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

| | |
|---|---|
| Տարեկան | 5 րուբլի |
| Կէս տարին | 3 ր. |
| Երեք ամիսը | 1 ր. 50կ. |
| Թիֆլիզում տարեկան | 4 րուբլի |

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

| | |
|---|---|
| Տարեկան | 7 րուբլի |
| Կէս տարին | 4 ր. » » |
| Երեք ամիսը | 2 ր. 25 կ. |
| Ամիսը | 75 կ. |

**«ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԵՒ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ» ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ**

| | |
|---|---|
| Տարեկան | 10 րուբլի |
| Կէս տարին | 6 ր. |
| Երեք ամիսը | 3 ր. 50 կ. |
| Մէկ ամիսը | 1 ր. 20 կ. |


Հասցէն Тифлисъ. Редакція „Хатабала". Հեռագրով Тифлисъ „Хатабала"
Արտասահմանից Tiflis Caucas Redaction «Khatabala»

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Այս օրւանից «Խաթաբալան» բացում է իր հինգերորդ տարեշրջանի՝ 1910 թւի բաժանորդագրութիւնը:

Չորս տարի է անցել այն օրից, երբ մենք ձեռնամուխ եղանք հայերիս մէջ սատիրական-երգիծաբանական թերթի հրատարակութեան և այդ ժամանակամիջոցում մենք արել ենք այն, ինչ որ կարող էինք, ծիծաղել ու լացել ենք՝ երբ այդ կարևոր էր, հեգնել ու ծաղրել ենք՝ երբ այդ անհրաժեշտ էր:

Եւ չորս տարւայ ընթացքում շատ ահ ու պայծառ, շատ տաք ու սառն օրեր ենք քաշել, ժամեր ենք ապրել:

Սակայն մեր երգիծանքը եղել է միշտ անաչառ, սատիրան՝ միշտ անկաշառ, որովհետև ոչ մի պաշտօնի—ոչ մեզ և ոչ մեր բարեկամների համար—չենք ձգտել, որովհետև ոչ մի բլոկ կամ կապ չենք ունեցել ոչ մէկի հետ, որովհետև անձնական, բարեկամական և կամ կուսակցական հաշիւ ու ընդհարում երբէք չենք ունեցել, բացի զուտ խաթաբալայական՝ հաշիւներից և ընդհարումներից:

Եւ այսօր էլ, ինչպէս սրանից չորս տարի առաջ, դուրս ենք գալիս պարզ ճակատով, մեր գրիչ ու հանաքով մերթ ծիծաղելու, մերթ հեգնելու,—մի նպատակով միայն՝—որ մաքրենք այն որոմները, որոնք փչացնում են հայկական հասարակական անդաստանը:

Բանալով հինգերորդ տարեշրջանի բաժանորդագրութիւնը, մենք կոչ ենք անում բաժանորդագրուելու «Խաթաբալային» անպատճառ, որովհետև մեր «Խաթաբալան» միակ թերթն է, որ խաթա է բերում ամենքի գլխին, որովհետև նա լացացնում և ծիծաղեցնում է թէ հարուստին, թէ աղքատին, թէ հովւին, թէ ոչխարին, թէ գայլին և՛ թէ գառնուկին։

«Խաթաբալան» ոչ թէ միակ, այլ և մօտիկ թերթն է այն բոլոր հալածուածների, բռնաւորների, դարդոտ անկեղծների, վերջապէս՝ տանջուողների, որոնք ուզում են յայտնել իրենց ցաւը, պատմել վային, խրատել խելին, ապտակացնել սեփին և սակայն ոչ միջոց ունին և ոչ կարողութիւն. իսկ «Խաթաբալայում» այդ վայերի, այդ խեւերի, սեփերի պատկերներն ու արարքները մերկացած տեսնելով հանում են իրենց նպատակին։

«Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ»—կարող է ասել «Խաթաբալան»։

Ահա թէ ինչու պէտք է անպատճառ բաժանորդագրուել «Խաթաբալային»։

Մենք խորհուրդ ենք տալիս բաժանորդագրուել և այն պատճառով, որովհետև անմեղ «Խաթաբալայով» շաղկապելով ամենքին՝ կուզէինք մեզանից և փաթերակուռ խաթաբալաներից ազատ տեսնել մեր ազգայիններին։

Ամենքին առաջարկում ենք բաժանորդագրուել և այն պատճառով, որ քանի շատ տարածուի «Խաթաբալան», այնչափ աւելի հող կպատրաստուի թերթի գեղարուեստական բաժիններին։

Միաժամանակ յայտարարում ենք, որ առաջիկայ տարում էլ, ինչպէս և անցեալներում, մենք չունենք—ոչ դէպի լուսին ուղևորուելու ցանկութիւն, ոչ երկնքից աստղեր իջեցնելու տրամադրութիւն, ոչ սուր ենք բանեցնելու և ոչ կեղտ, ոչ ռումբ և ոչ ցեխ, ոչոքի ոչ պալատներն ենք գովելու, ոչ դրախտը պարսաւելու։ Մենք կը տանք «Խաթաբալայի» մէջ արձագանքը այն ամենի, ինչ որ տալիս է հայկական կեանքը։ Մենք կը խօսենք ու կը ծիծաղենք այն ամենի վրայ, ինչ որ ծիծաղելու և խօսելու առիթ կը տայ, առանց ոչոքից քաշուելու, առանց ոչոքից ակնածելու դիրքի, փողի կամ այլ առաւելութիւնների պատճառով։

### ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԷՔ։

Տարին լրացաւ ու նորն է գալու,
Պարզ է նոր տարին նոր կեանք է տալու։
Հայեր թէ կուզէք, որ միշտ լաւ ապրէք՝
«Խաթաբալային» բաժանորդ գրուէք։
Բաժանորդ գրուէք դուք «Խաթաբալին»,
Որ ճիշտն իմանաք մեր չարն ու բարին.
Անուշ ծիծաղէք՝ անհոգ քրքջաք
Եւ ինչ որ ասենք, բոլորն հասկանաք։
Բաժանորդ գրուէք,
Թէ որ խելք ունէք
Եւ մեր դրօշակը
Բարձր ու վեհ պահէք։

ԱմՀՆ

## ԱՌԱՋՆՈՐԴՈՂ

Կօսիս էրազ ըլէր…

Կօսիս էրիզ էր, վուր «Խաթաբալէն» մօզանեցինք ու հուզուրում կի չուրս տարին անցել է վրա հնգումը իր վուտնէ դնում մեր անգնջում ու չարաճճի «Խաթաբալէն».

Վա է. մէ ամիս, ամիսուկէս էլ ու «Խաթաբալէն» հինգ տարումը կուլի։

Հէյ գիդի հա ժամանակ։

Մախս գալիս է սրամէն չուրս հինգ տարի ադաբւայ խուրիէքը, վա վուր չիմ փիքր անում—արմաւմիմ, թէ ինչու չըզժւեցայ. աօ էն ինչ էր. մինձից մինչկի պուճուր, հարստից մինչկի աղքատ, ղերենալ զուբերնատորէմէն մինչկի գվօրնիկ, տէրտէր թէ կաթղիկոս, ցոցիալ թէ անարխիստ, դրաշար ու խմբագիր, իլաքի էրկու շահանոց խմբագիրները ինչիր էին անում է։

Վա՛, արի ու մի արմաւ։

Վայ դէդի ծծիր, էն ինչ օրերումն էինք ապրում, ինչ օրիր էինք տեհնում, ինչ դայդի բանիր փիքր անում ու օրիր քաշում։

Աստուած կինք տայ միր բէդախտուր էրիցովին, ամինէտ. ժուգն էր, վուր «Խաթաբալէն» մօզանից ու էնօրեմէն դէսը ու սրանից էլ դէնը, մինչկի աշխարքս մոշլս կուլի, «Խաթաբալէն» էլ կուլի ու կուլի։

Աստուած հայ ազգին ու «Խաթաբալէն» իրարից անպակաս անի, յաջուղ ըլին ու մէ բարցի, մէ ջուխտ մութաքի, իրիք չուրս դօշակի ու տասերկու դուժին լէշրի արժանացնի սրանց։

Համա, տեսէք սիրելիք, վուր բանը ինչումն է. «Խաթաբալէն» վուր կայ, «Խաթաբալա» է։ Հաուց ազգն էլ, հաուց ազգ է. շատ բանիր դուքայ ու կերթայ, շատ տուտուցնիր, էսենց էլ կու խօսին, էնենց էլ. համա իմ դէդիդի արիւր գիդենայ, ինչ վուր «Խաթաբալէն» կօսէ, էն կու մնայ, աւիդինական պօլիտիկուրի ու փիլիսոփայուրի. չունքի՝ մինք հաուց ազգը խիստ շատ ինք սիրում, ու էնենց կի չէ վուր մէրը իր վուրթուն պաչպչելիս սրտին դաճղէթւայ(ճխլել)է արի, վունչ էնենց վուր թուլուխի հանգի ծիծը բերնին տալով շունչը կալնի, վունց էնենց, վուր գովքը պատմելով պաժարնի դառնայ, վունչ էնենց, վուր ասկի դուչաղութինը գովելով, վիրչը քինթն ու պռունգը ջարթւի։

Մինք ազգին սիրում ինք հէստի, վունց վուր մէ օրինաւուր մամէն իր օջախը, էնենց, վունց վուր խիլքը գլխին, ու վունց թէ ցիլինդրին, ան փափախին,—հէրը կու սիրի իր վուրդկերանցը.

Էս թէ գիդիք ինչի իմ ասում։

Էն ասում իմ վուր, դուք էլ իմանաք, վուր չուտօր թազա տարին գալիս է ու թազարիկ (պատրաստութիւն) տեհնիք ամեն լաւ բանի, խիլք ու ուզուփի, պարտ ու տալիքի ու միր «Խաթաբալի»։

Իս ասի ի զարմանալի իմ ում թէ ամեն մարթ ասա է, կօսէ.

Էս ինչի է ասած։

Էս էլ ասած է էնդուր վուր, թէկի առանց «Խաթաբալա» մարթ կու մնայ, կօսէ, բաս էտ կուլի արմիքի բան ուսուտ, կօսէ։

.Մաշ։

«Վուշ միայն հացիւ կեցէ մարդ, կօսէ», հրամանք է արի միր Տէր Իսուս Քրիստուսը։

Էս էլ էնդուր՝ է ասած, վուր մենակ պանիր ու հաց ուտելով, լաւ շուրիր հարնելով, մենակ պօլէտիկուրի խօսկերով. մենակ միսն տներում ապրելով, կալէտ, պէրոժնի ուտելով ու դազէթնիր առնելով, մարթս չի կանայ ապրի կօսէ, թէկի «Խաթաբալին» խասակ սրտով բաժանուրդ չի գրւի ու իրա ճանանչ մանանչին էլ, իրա համփան մամփանին էլ խաթաբալիստ չի շինի։

«Խաթաբալիստնի՛ր բոլոր երկրների միացէք, ծէքս կալ տւէք ու ղայմիշցէք, արծիւ կերէք ու անդացէք, գիր կարդացէք ու խէլքացէք», կօսէ. ասիլ է ջէր սրանից չուրս հազար տարի առաջ միր բիձու տղայ Խիկար ի-

ეროვნული ბიბლიოთეკა

մաստանը, վուր ինքն էլ համ քախկցի էր, համ էլ թունդ խաթաբալիստ։

Էտ խոսկերն էլ էնդու համա է ասած, վուր թէկի «Խաթաբալա» կարթաք, կօսէ, համ շատ կու ապրիք, համ էլ լաւ կու ապրիք, ու համ էլ դայիմ կու ապրիք, կօսէ։

Այ թէ ձիզ ինչի իմ ասում, ասանց ամէն բանի մացէք,—կնիկը անմարթ, մարթը անկնիկ, ննգիրը ան ննգիր, աթմօրթին ան բարեգամ, մացէք անհաց, անտուն, անշուր, համա ասանց «Խաթաբալի» կի՛, Աստուձ,—ոչ մի օր՝ վունց ձիզ տայ ու վունց միզ։

Համա էս վուր ասում իմ, էն էլ իմ ասում, վուր ուրիշ հայեվար գազէթներ էլ կարթաք ու բաժնուրթ գրւիք. վուր խիլքին զօռ չտաք. էն մէկէլ հայեվար գազէթնեռեուն էլ բաժնուրթ գրւեցէք. «Սուրանդակը» լաւ գազէթ է ու խանդխաւան իս էլ իմ կարթում, «Մշակն» էլ կարթացէք, համ էլ բաժնուրդ գրւեցէք։ «Հովիւն» էլ թէկի աէրաէր բարեգամ ունիք, դուս գրէք «Հորիզոնն» էլ, թէկի դուս գուքայ, ասացէք «Գիզատնտեսին» էլ, թէկի կով ու արտ ունիք, «Գիզարւեստն» էլ թէգի ճաշակ չունիք, Թաւրիզի «Առաւօտն» էլ, թէկի իրիգնութին շատ իք քնում, ու մէկէլ գազէթներն էլ, թէկի խարար-մարար ու աւէկօսէներից կարօտ իք։

Կարթացէք էլի տօ՛, ձիզ համա իմ ասում, ձիր խէլին ունիմ աչքիս առաք թէ չէ․ վա՛յ դարդի՛ս․ ուրիշը վուր ըլէր, խիկի էլ այնումը չէր գցի։

Մա՛շ․ իս ձիզ համա իմ ասում վուր, դուք հայերդ մարթ դառնաք, բոլոր գազէթնիրն էլ, գրքիրն էլ, ինչ վուր հայեվար է՝ կարթաք, վուր խօսքի գէլէշ, իս էլ ասիմ թէ մարթկերանց հիդ գործ ունիմ ու վունց թէ ախմախ աւտուացնիրու հիդ։—

Հիմի դուք գիդիք. ու թայլն ձիզ իմ ասում, թէ խիլք ունի՛ք, մաշ լսեցէք ու «Խաթաբալի» թայլն ամէն մէկդ տասնուհինգ եա հարիր բաժանուրդ գրւեցէք, թէ չէ՛, հաւատա վիրջը կու փոշմանիք, չունքի աշխարքիս վիրջը գալիս է, ու էդ կոպէկնիրը վուր պահում իքյ բոլուրը շուն ու գէլի կու մնայ, բոլուրն էլ կու անդէրանայ. ու ձիր ջգրու էլ, ո՛վ գիդի իս էլ դարուլ—ըլիմ աշխարքիս մօշլա ըլէլուն։

Ձիզ համավէւրն ափրօ լաւ է, հինգ մանէթ տար «Խաթաբալին» բաժնուրթ գրւիք, թէ թօղնիք վուր, աշխարքը մօշլա ըլի ու ձիզ էլ ձիր փուղերով հիդը գիվիր տանէ անդադրամէնտանուց։

Խիլքի էկէք ու ինձ մէ ջալդով ջուզար գրէք։

Մնամ ձիզ համա կէթիլ փիքր անող—
Բաղկի վուրթի՝

**Գասպար Կալաստուզեան**

---

## ՔԱՂՔԻ ՀԱՆԱՔ

*Նւէր «կոտր» ընկած եւ ընկնող վաճառականներին*

Քրքի ծնունդ հաստափորին,
Մեծ Վարշաւան, չէն Մոսկւան՝
Ցիմարարար հաւատացին՝
Ապրանք ուրին զանազան.—
Պատրօն, հրացան, ատրճանակ,
Կոզակէ, զօնտիկ ու կռճակ,
Փթած գուլպայ, գալօշ, գանակ,
Թել ու հուլունք, թաց լեզակ։
Ուրանում են աւագակին
Մեծ Վարշաւան, չէն Մոսկւան...,
Ինչու ուրին հաստափորին,
Ապրանքները զանազան.—
Պատրօն, հրացան, ատրճանակ,
Կոզակէ, զօնտիկ ու կռճակ,
Փթած գուլպայ, գալօշ, գանակ,
Թել ու հուլունք, թաց լեզակ։
Այսպէս գիտցիր, մեր քաղաքում
Բուն են դրել շատ բզեր՝
Արիւնարբու ու անկշտում.
Նրանք ուտում են ապրանքներ.
Պատրօն, հրացան, ատրճանակ,
Կոզակէ, զօնտիկ ու կռճակ,
Փթած գուլպայ, գալօշ, գանակ,
Թել ու հուլունք, թաց լեզակ։

**Գէօ-Դէօ**

---

## Հ Ե Ր Թ Ո Ւ Մ Ն
## ՍԱՋԽԱՐԷԹԻՑ

*Արտաքուածի լրացումը, վարագոյրը փակւում է։*

(Ուշացած պատասխան անարժան գըրպարտութեան, «Խաթաբալայի» № 38-ում «Հայ Վարժապետ» ստորագրութեամբ յօդւածագիր պարոնին)։

Պարոն հայ վարժապետը գրում է «Խաթաբալայի» № 38-ում, որ իբր թէ Եփրեմ Թօջեանը «իր ջինս ու ջինջանում», բացի կանանցից, եղել են Սաջխարէթի եկեղեցու երեցփոխութեան պաշտօնեաներ. և *կարծես թէ փողմանում ամենուն փերցրած եկեղեցին*»։

Ես կասեմ որ սուտ է, դուք էլ ընթերցող պարոններ և տիկիններ, ասացէք որ սուտ է, վարժապետն էլ գիտէ, որ սուտ է. է որ սուտ է, սուտ է։ Մի՞թէ կարելի է առանց ընտրութեան մէկը երեցփոխ դառնայ, դա խօ վարժապետութիւն չէ. Էնպէս չէ՞, պարոն խմբագիր. ինքնակոչ երեցփոխ խոկի չէի տեսել, բայց վարժապետ շատ։

«*Հայ Վարժապետը*» ասում է որ՝ իրեն, ոտքի տեղ գոճի էին տալիս եղել. դա էլ սուտ գլխով անպոչ սուտ է, դուք էլ ընթերցող ասացէք որ սուտ է, «Խաթաբալան» էլ գիտէ, որ սուտ է, գոճի որ լինի, ինքներս էլ լաւ կուտէինք «*խորնով*» և «*զարչինով*» խակ ատներն ու գլուխն էլ «*մծուծով*» ավդակի մազա բան է, վարժապետ ուրիշ տեղեր էլ է կերել էդ բաները, որ էստեղ ստացնէ՛։

Մի տեղ էլ ասում է, թէ «*բալքի*» բերին և ոտքիկի տեղ ուրին։

Սա սատանի պէս սուտ է, թէև, եթէ էզչափ պատիւ տալու լինէինք. էս տարի էլ չէր գնայ մեզանից և մեզ մօտ կրկին վարժապետ կը լինէր։ Գոճի, բաղ, հնդուհաւ, որ ինձ համար էլ բերեն, ես բոլոր գործերս թողած՝ վարժապետութեամբ կըզբաղւեմ, էլ ո՞ւր եմ գլուխս ցաւացնում։

Մի մաղալու բան էլ է ասում մեր «Հայ Վարժապետը», որ իբր թէ իմ ծխական հարկի տեղ, «*պօստայի մարկաներ*» եմ աւել։

Ես որ չասեմ սուտ է, ինքներդ պիտի ասէք, որ և սուտ է և մուտ է, ու մի քիչ էլ յիմարութիւն է. որպէս վաճառական պօստի մարկաների տեղ աւելի շատ փող կը տայի, բան մարկա, որովհետև մարկաները վատանակով կը ծախէի։

Ինչպէս երևում է «Խաթաբալայի» № 38 ում գրած «*Հայ Վարժապետ*» յօդւածագիրը ստասանութեան զատատու է։

Մի բան միայն զուզ ու ճիշտ է, որ վարժապետը մնացել է և ես գալիս եմ յիշեցնելու։

Դա քննութիւնների ժամանակ աշակերտների բան չգիտենալն էր, որի համար «*Հայ Վարժապետը*» կարմրում էր, սա գրում է. դուք էլ տանէք գրուստ է, վարժապետն էլ համաձայն է, որ գրուստ է։

**Եփրեմ Խօջայեանց**

---

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԿԱՐՍԻՑ

Գաղէթաճի Աղա.

Անցրդ յօյս, էրծիս մէջը հարանեվոր էի, հրամանոցդ համար չեշխա չեշխա կանֆէտներ գրկեցի, չեմ գիտիր տեղ հասաւ, թէ չէ։ Հմը գիւղն բանը, շատ եղած հարսնիք էր։ Մամփրէն առիր էր Արտէնի աղջիկը, Եղնիկը գառիր էր քաւոր, խաչի տեղ զօնթիկն էր գրիր հարս ու փեսի գլխուն. Երւանդը իրան թաղայ շինած մօդնի մաշտացով պատկէր կը։ Պասկը զատտինիցի մէջ կենէին կը։ Կարգը վեր գրած տարգուտղը ապար բաշի էր։ Շուլաւերցի թաղա զոլայած Սերգօն զուռնաճի էր, Եղիշէն զուռնաճի էր. Գեօզալ-Աղա բաջին հարսնքուր էր, Ղալայչի Մարգարը, փալանդուզ—Մկօն, Գասպար Կալատոզովը հարսնաւոր էին։

Բանն մէտքս է, բանմ ըսիմ, քիչ մնաց հարսնքուրը հարսին հետ փոխս յընկնէր, ընդան քիրայ վարավուրդ էրին, խեղճ աքսիկաթակին փախուցինք։ Հարսնիքին բի-

թունս էլ հարբիր էինք. խլլաթիս ինի գալխ-գանլի Երւանդը, յիրար վրայ կոնծից ու բաշլայից չեշխս չեշխս ճառեր՝ Աստուած, Քրիստոս, խաչ, աւետարան, ժամ, պատարագ... ըթթուն-ըթթուն արբեց ջուրը լցրեց ու բռաւ. եղն ու մարդը մէ հէսար են. եղը կը սատկի, մարդը կը մեռնի. ոչ դժոխք կայ, ոչ արքայութիւն, խելք ունիք, կերէք, խմէք, քէֆ էրէք, թէ չէ փոշմընիք կըք: Ուռամյ, ուռամյ, ճվացին չորս թարաֆէն: Ան ձէնին վեր թռայ օր ինչ, հարանիքը մեր տունն է. անձրեւը հաւար հաւար շաղտակը, տունս անպէ՞ս կը կաթէ. անպէս կը կաթէ որ, Աստուած փրկէ ազատէ, սաղ քեօշած չկայ օր սթրվինք. չորս թարաֆէն չայմայ ահաթի պէս ձը՛լըթ, ձը՛լըթ կաթէ կը: Լու լոզցանք. վաղուց է չէինք լոզցել:

Դ.ալայցի Մարգար

---

— Դու երբէք չես զուաճանել ամուսնուդ!

— Երբէք!

— Եւ ոչ մի անգամ չես ասել, քո ամբողջ կեանքում:

— Ոչ մի անգամ:

— Բայց ինչպես ես նրան միշտ ասում, թէ սիրում ես իրան:

— Այդտեղ ինչ ասելու բան կայ, դա ընդունուած է ամէն տեղ, «ես քեզ սիրում եմ», այդ խօսքը շոյում է ամուսնու ինքնասիրութիւնը:

—

Դատաւորը:—Պատմեցէք մեղադրեալ, ինչպէս շինեցիք դուք կեղծ դրամները:

Մեղադրեալը:—Պ. դատաւոր, միթէ ես իմ դրամները պարտաւոր եմ ձեզ ձրի ասելու: Քու լիցի, հարիւր ռուբլուց եթէ մի կոպէկ էլ պակաս տաք, դարձեալ չեմ ասի:

---

## Տ Է Ր  Պ Ա

Ես, Թէմիզարուն հայ Նաշչվանցի Պօնժուռին Մելքոնս. մեր փրկիչ տէր պաներուն խուլամիչ էղած աւէթներուն դպօնիկը կիրի առի ու փաստորա փառնասիթ կանեիմ. իմիս եղնա պա Կասպար աղա Կալատուգովին:

—

Տէր պա սասծըտ մութ խավար քիշէր աշխար կուքա. փոխչինը ատ է վոր, միշտ էրէսը սէվ կըլա ժողովուրթին ախմացը:

—

Աշխար էկած չէկած, աչքերը խօշոր խօշոր կպանա, չորս թին կնայէ, կաթա կըփընտուէ, կնայէ չիքա. անպէս ձինի ծանով կպօտա կուլայ վոր, պութարը օցը խածիլ է:

—

Կնայէ վոր մամային կաթը քէօռէնէ, փաթյամիշ ըլալու խաւէր կուտէ:

—

Մեծնա նը, ժամ կերթա. կերան կըլընէ, սամոց կասէ, էնձամը տէր պաներուն ալայ զալվերութիւնը իդուչաթ կանէ թէմից:

—

Տէր պաները եփոր մէյնակ նստած ըլան, իրենց աչօթէն կուտին, եփոր էրկու իրէք հոգի մէկ տեղ թոփ էղան իսէ, ատ ուժէ օտարին աչօթէն կըլա:

—

Տէր պա սասծըտ, օտարին հացը կուտէ, իրեն համար խասէվէթ կանէ—աճապ ինչէ՞ն անէ վոր, իրէն քուրծը աղէկ ըլա, օտարինը չօութ ոնիմ, ուզենան թօ եօխ ըլան ալայը:

—

Տէր պաները խելք սասծ պանը զալաթնիկով կկնին՝ մեծ դիժարութիւնով, անալ վերաախա, ամա, խէվութիւնը փութերով կկնին՝ ան ալ զանալիչնի:

—

Տէր պաներ կան վոր. հալավը հաքին տէր պայի կըլմանի. ամա. հալավը վրայէն հանեցիր իսէ, թամամ զաակիլ է վոր կա:

—

Տէր պա հարկեյը շատ ախժար պան է, զէրէ կեանքին չահսած չկերած պանը կուզէնա:

—

Տէր պա սասծըտ իրէն համար աղօթք կանէ, աղօթքն ալ ինքը ասաթավիթ կանէ, ամա եփոր ժողվուրթի համար պէտք ըլա, համան հայրապետներուն կըրած աղօթքը կկարթա:

—

Տէր պաները աղէկ գըխուրոքնի աքթեօռներին, եփոր մեռել ըլա՝ իրենք ալ դուք ին, եփոր կնունք ըլա՝ ուրախ կըլան, եփոր հարանիք ըլա, կնիմարթոց դիմացը թավուզ խուշիի ֆասօնով կքալին իընամընոալէն, եփոր հոգեհաց ըլա՝ սարասիլի չախաձի կըլան:

—

Տէր պա սասծըտ, եփոր ախքատ աատթ քայ օղորմութիւն ուզենա, Աստված տա կասէ, ամա եփոր գէնկին աատթ քանը, ինքը կուզէնա ու կասէ, տուք եվ տացի ձեզ:

—

---

## Փ Ե Լ Ի Ե Տ Օ Ն

## ՍԻՐՈՂ ՍՐՏԵՐ

(Պօէմա, կարելի է և օպերայի համար)

*Մեր աշակերտները*

Ներսիսեան դպրոցի չորրորդ դասարանի աշակերտ Կարօ Թզուկեանը, սիրահարուած է Յովնանեան դպրոցի հինգերորդ դասարանի աշակերտուհի Մարօ Պզուկեանի վրայ:

Մի գեղեցիկ օր, երբ որ Կարօն սովորեց տառնատւոր թխել, այսպիսի մի նամակ գրեց ամառանոցից Մարօին.

Վաղո՜ւց, շատ վաղուց,
Յաւիտեան կորած,
Քո սիրուդ համար
Դասից մոլորուած,
Միշտ քեզ եմ յիշում
Սիրելիս, հոգիս...
Միշտ քեզ եմ յարգում
Անուշ հրեշտակիս:
Քու խաթեր համար
Դաչա գնացի,
Գուցէ մոռանամ
Խեղս իռձ ասացի...
Գուցէ մոռանամ
Ու էլ չը յիշեմ...
Սիրուն Մարօիս,
Աչքիցս կորցնեմ:
Գուցէ կարենամ
Նորից սովորել...,
Դրաբար Եղիշէն
Լաւ անգիր անել...
Համա, չի լինում...
Ինչքան սովրեցի,
Այնքան երեսդ
Մտաբերեցի:
Էլ ինձ մի այրի,
Շուտ արա, սիրի...
Չէ որ ասացի՝
Երբ որ մեծանամ՝
Անշուշտ, անպատճառ
Բժիշկ կը դառնամ
Ու դու էլ իմ կին...
Էլ ինչ ես ուզում
Իմ սիրուն Մարօ,
Դու էլ ինձ ասա՝
Կարօ ջան, Կարօ:
Տուած պատկերդ
Հ՛ը չմոռանաս,
Կախել եմ պատին՝
Որ յիշեմ դէմքդ:
Գրծաւ նամակս
Գառնիկ է, պստիկ,
Կօջօրում գրեց
Կարօդ գեղեցիկ:

Մարօն ստանում է այս նամակը և տասնեց երկար մտածելու գրում է հետեւեալ պատասխանը:

Կարօ ջան, Կարօ
Քեզ շատ եմ սիրում,
Քո սրտիդ համար
Վաղուց եմ տանջւում...
Բայց դու սիրուն չես,
Համ էլ լաւը չես,
Շրթունքներիդ վրայ
Դեռ բեխեր չունես:
Այնպէս որ այժմս
Քեզնից հեռացած,
Աղասու սիրուհին է
Իմ սիրտս այրուած:
Ասում ես, որ դու
Բժիշկ ես դառնում...
Սակայն դեռ նոր ես
Զորրորդը փոխւում...
Իսկ իմ Աղասին
Հինգերորդ նստած՝
Քիմիա, Ֆիզիկին
Ականջը տուած,

Տէր պա տասածրա ինքը իրեն ատամըը թաժմին կանէ, քէշ ալէկ, սուտ ու զորթ կլըպըռաա, ժողովուրթի ձեռքէն ատակ կառնէ, ամա, իրեն ձեռքէն քաղիկ անելու համար, տաաը հատ իզվէսթնի ատաաըը պէտք կըլա, ան ալ եա արաա՝ եա փարաա։

—

Տէր պա տասածէր եփոր պարտքըրդ ուզենաս նը, «պալաա կասէ, քիչ մը համփերէ, մի աըատըա, քանի հատ հիմանդ ունիմ, ասօր եա վաղը, մէկը եա էմէկալը կմեռնէ, պարտքերըդ կուտամ» կասէ։

—

Տէր պա տասածիր, էկէր ախքատ փուխարէ մարթու զամակ սաաթ քանը, էրէսին պիէլէ չի նայիլ, ամա էկէր զէնկին մարթուշուն սաաթ քանը, կօլոխը կշըփէ, հաց ալ կուտա, աղայի հոշին կուքա կասէ։

—

Տէր պա տասածիր, էկէր փուխարէ մարթ սաաթ քա, չաթլամա այեաղին կատկը հանէ, սահաթներով պարէվի կենա, մէմը պերանը չի պանալ, չաախլ կօլոխըտ ծածկէ. ամա, զէնկին մարթը տունէն սուֆա էլած իքէնը մօռնա շլեափը անելու, աէր պան համան իրեն շլեափը կհանէ, աղայի կօլոխը կանցունէ։

—

Տէր պա տասածրա, խոստովանքը հետը քերեզման պիտ տանէ սէօզալէ, ամա, Ախտապէթին սէրուէթը Մաչային կասէ, Մաչայինը Սանթուխին, սիպէս իրեն քործը եօլա կտանէ.

—

Տէր պաները տասը պատվիրանքին էնկ ափսաթանի տուշմաններին, ասօպէնը վեցումին ու օխտումին։ Էկէր ձեռքերէն քանը, նամարդու պիտ անին։

Գօնձաւորին Մեյրան
տաւ'ա կլյան

---

— Ասացէք խնդրեմ, պարոն, որտեղ է այստեղ, գեղատունը...

— Գեղատունը, այ՝ նախ և առաջ գնացէք ուղիղ, յետոյ ծռւեցէք դէպի ձախ, երբ որ ծռւեցիք ձախ, ապա կծռւէք աջ. յետոյ գնացէք ուղիղ, իսկ յետոյ մի քիչ էլի ձախ, և հենց այնտեղ էլ գեղատունն է!..

—

— Սօֆիա, քո այդքան յաճախ անհրեւոյթանալդ պ. Լէօնի հետ, թոյլ են տալիս ինձ... ըմ... այսինքն ինձ մտահոգութիւն է պատճառում...

— Այդ լաւ է, սիրելի ժօրժ, վարժուիր մտահոգութեան, որովհետև քեզ խելապէս յաճախ հարկաւորւում է մի որևէ բանի մասին մտածել։

Ասա ինձ սիրելի Օլգա, ինչ կուզէիր ստանալ ինձանից, քո ծննդեան տարեդարձի օրը։

— Աւելի շատ նորանից, որը դու մտադիր ես ինձ նուիրելու...

—

— Իւան Նիկիտիչ, ինձ թւում է որ դուք բուականներին ատաղձացել էք, երևի, ճանապարհորդել էք արտասահման, կամ որևէ մի ուրիշ տեղ...

— Ըմ... Ես, ոչ! բայց կինս ճանապարհորդել է ծովի վերայ...

## ՀՊԱՐՏՆԵՐԸ ԸՆԿՃՒԱԾ

Մի տասւօտ մայիս ամսին,
Մտայ պարտէզ իմ սիրուն,
Սքանչանալու այն ամենով,
Ինչ պարգևել է գարուն։
Ախորժելի հոտ էր բուրում,
Զով օդի մէջ ծաղկանցից.
Ցօղով պատած խոտ ու ծաղիկ,
Փայլում էին արևից։
Զարաճճի, ուրախ առուն,
Կարկաչելով հոսում էր.
Մեղմ զեփիւռն էլ ծառ ու ծաղկին,
Ինչ քնքշարար շոյում էր։
Հրաշալի գարնան երգիչ,
Սոխակն էր նուրբ գեղգեղում.
Փշոտ թփից գոռոզաբար,
Վարդն էր նրան լուռ ժպտում։
Բայց... ամենից սքանչելին...
Կոյսն էր չքնաղ, գեղեցիկ...
Որ մրցում էր ալ վարդի հետ,
Վեհ տեսքովը իւր գողտրիկ։
Երբ վառ սէրս ես յայտնեցի,
Վարդից հպարտ այն կուսին.
Անգթաբար նա ինձ մերժեց,
Ինչպէս վարդը սոխակին։
Անցան օրեր. վարդը սիրուն,
Գունատւեցաւ, թառամեց.
Անցան տարիք. կոյսը նոյնպէս
Գրաւչութիւնը կորցրեց։
Այժմ անբաղդ, կոյսն ու վարդը
Անցեալ փառքն են լուռ ողբում,
Սոխակն ու ես վրճակակիցք։
Ընկճւածներին ենք խղճում։

Յով-Մար.

---

Ուսում է առնում
Հոգով ու սրտով,
Եւ ոչ քեզ նման
Ծոյլ յորանջելով։
Կարծեմ հասկացար
Սրտիս ուզածը,
Արդէն իմացար
Մտքիս դրածը։
Իսկ այժմս, Կարօ
Պատկերս տուր յետ,
Ազատուն պէտք է
Սիրեմ այսուհետ։
Գրեց նամակը
Հանդիսու անվրդով՝
Մարօ Պղուկեան
Համարձակ, անխռով։

Կարօն ստանալուն պէս, մի փոքր տաքանում է և յուզւած հետևեալ պատասխանն է գրում Մարօին։

Ստացայ նամակդ
Դաւաճան Մարօ,
Ինձ լաւ ճանաչիր
Կարօն եմ, Կարօ։
Դու լաւ իմացիր,
Այլոց կը սիրեմ.
Քեզանից ընտիր
Աղջիկ կը գտնեմ։
Հապա, ինչ ես դու
Եթէ ոչ, պատառ
Կատարեալ ջատու.
Քիթդ մի գունդայ
Թշերդ դատալ,
Ազատից դառնայ
Աշխարհի համբալ։
Գնա, լաւ սիրի
Սատկած Ազատուն,
Դարձրու քեզ համար
Հոգի սիրատուն։
Ես շատ լաւ գիտեմ...
Ցիմար Ազատին.
Գրատախտակի մօտ
Կաւիճը ձեռքին,
Լուռ մունջ կանգնած է,
Ինչպէս մի գերան
Եւ չի հասկանում
Պարզ ակսիօման։
Էլ ես ինչ ասեմ
Միւսների մասին...
Համբահաչուցն էլ
A քառակուսին
A խորանարդից
Ջոկել չի կարում։
Այդ է հինգերորդ
Նստած Ազատից։
Ես էլ այսուհետ
Ձեմ նայի դէմքիդ,
Պատկերդ էլ այժմս,
Մի անթարթում
Կը պատառոտեմ,
Եւ մի րոպէում
Կրակը կը ձգեմ։
Երբէք ինձանից
Նամակ չսպասես,
Ու էլ ինձ նամակ
Երբէք չուղարկես։
Այս նամակը գրեց
Կարօ Թզուկեանը
Որին չյարգեց
Մարօ Պղուկեանը։

Մարօն ստանալուն պէս, մի փոքր տաքանում է և ցոյց է տալիս Ազատուն. Ազատին էլ նոյնպէս տաքանում է և երկուսով մտադրւում են «ցոյց տալ» Կարօին։

Այո, կը սպասենք և կը տեսնենք, թէ ինչպէս են «ցոյց տալիս» Կարօին։

Լրտես № 39-ից

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՂԹԱԿԻՑԸ

*Սամսոնի խմբագրութեան*

Մեզանում առանձնապէս աչքի ընկնող ոչինչ չկայ։ Միայն եղանակները շատ անձրևային են, այսօր էլ երեկոյեան ժամը 4-ից, երկինքը ամպեց, բարձրացաւ ոչ շատ ուժեղ քամի, և սարսափելի թող...

—

*Ցարգելի պ. խմբագիր!*

Վերջին ժամանակներս, տեղիս քաղաքային կլուբի դահլիճում և էլի ուրիշ տեղերում, տրւում են ներկայացումներ. յաճախել ինձ չէ յաջողւում, որովհետև ինձ համար դժւարութիւն է ամեն անգամին մէկ րուբլի վճարել. դա ամսական մի 30 րուբլի ծախք կանենայ. ուստի խնդրեմ ուղարկել խմբագրութիւնից մի վկայական, ինչպէս թղթակցի, որով ես ազատ մուտք կունենամ կայանալիք ներկայացումներին, որոնցից և հնարաւորութիւն կունենամ տալ թղթակցութիւններ։

—

*Մի նոր-խմբագրութեան կողմից*

Այսպիսի թղթակիցներին պահանջւած վկայականը ուղարկենք թէ ոչ.

---

**Ներկայ №-ի հետ ուղարկում ենք «Խաթաբալայի» գաւառական բաժանորդներին դրամի փոխադրական պոստայինբլանկներ։**

**Խնդրում ենք օր առաջ պարզ գրել հասցէները և այնպէս ուղարկել։**



ՑԱՑՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ




**№ 4711 ՃԱՐՊՈՏ ԾՊԱՐ**

Жирная пудра

Սպիտակ, վարդագոյն և դեղին.
Պատրաստւած է ամենանուրբ նիւթերից, որոնք կաշու համար վնասակար չեն, և մորթին կակղացնում ու քընքշացնում են։

**ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ**

Քէօլն Ռայնի վրայ և Ռիգա,
Նորին Կայսերական Մեծութեան դատարանատակարար

Фердъ Мюлгенсъ
Кельнъ н/Рейнѣ отд. въ Ригѣ

5—1

ՇՏԱՊԵՑԷՔ ԳՆԵԼ
**Ա. Ի. ԱՄԻՐԱՂԵԱՆԻ**
Մանուֆակտուրի վաճառատունը Թամամշեանի քարւանսարայում
№№ 19, 22, և 23 առևտուրը վերջացնելու պատճառով

**ԱՓՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱՆ**

Ծախւում է եղած բոլոր ապրանքը—ամեն տեսակ մետաքսի, բրդի մահուդեղէնի, քաթանի, բամբակի և կանացի հագուստների կտորներ։

ՕԳՏՈՒԵՑԷՔ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ

10—2

13—6

ԹԷՅԻ ՀԱՄԱՐ ՊԷՉԷՆԻՑԷ
ԼԱՆԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ
ԷՅՆԵՄ.



# ՓԱՐՈՍ

ՆՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ **1910** ԹՒԱԿԱՆԻ

Հարուստ ու ճոխ բովանդակութեամբ։ Պարունակում է իր մէջ մի շարք յայտնի գրական գործիչների յօդւածներ, գրւած յատկապէս օրացոյցի համար։ Ունի հայերիս մէջ դեռ լոյս չտեսած արժէքաւոր յաւելւած «ՌՈՒՍԱՀԱՅ ԴՐՈՂՆԵՐ» վերնագրով, որի մէջ զետեղւած են քառասունհինգ հայ գրողների պատկերները իրենց համառօտ կենսագրական և գրական գոյնը որոշող յօդւածներով։ Վէհ. Կաթողիկոսի և Մինաս Չերազի պատկերներով։

ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

**Մասն I.** 1) Շարժական և անշարժ տօներ, 2) Կայսերական տօներ, 3) Պատկի արարողութեան թոյլատրելի օրերը, 4) Օրացոյց 1910 թւականի, 5) Ժամերի համեմատական ցանկը, 6) Ո՞ր օրը խմութիւնը պէտք փակել։
**Մասն II.** 7 Ջերմաչափ, 8) Օրէնսգրքեր, 9) Զինւորագրական կանոններ, բ) Ինչ արժէ զինւորական ծառայութիւնը, 10) Մեծ պետութիւնների զինւորական բիւջէները։ 11) **Քաղաքական.** Մերձաւոր արևելքի վերածնութիւն, 12) **Աշխարհագրական.** Երկիրը կը մեռնի ծարաւից, 13) Հիւսիսային բևեռի բացումը, 14) Աստղագիտութիւն ա) Տարւայ յարաբերութիւնը, բ) **Տիեզերք**, Տարբական հակասութիւններ աստղագիտութիւնից, գ) Մոլորակների համեմատական պատկեր, 15) **Դիտական հեռագաղ** ա) Երազների վաղեմի բացատրութիւնը, բ) Երազները կեանքի արտացոլումներն են, գ) Երազի հոգեբանութիւնը, դ) Երազները և մեր հիւանդութիւնները, ե) Երազները և նրանց նշանակութիւնը, 16) **Առողջապահական** ա) Մենք շատ ենք ուտում, բ) Մնդի նորմալ բաժինը 24 ժամւայ համար, գ) Մարսողութեան ցանկը, դ) Մածուն և կէֆիր, ե) Առողջ մարդու ննջարանը, զ) Հագուստը. 17) **Գիւղատնտեսական.** Երկրագործական գործիքների և մեքենաների մասին. Ա. Աթանասեան 18) **Դիւղական.** Ջուրը. Ց. Աբովեան։ 19) **Լեզուագիտական** ա) Լեզուների կամ միջազգային լեզու, բ) Գլխաւոր լեզուների տիրապետութիւնը, գ) Բարբառներ Մեսրոպների արբում. 20) **Քէլեսմի**, Կառք կորած կինը, Նար-Դոս 21) **Դրագական** ա) Ուսումը աղքատութեան Վ. Աղայեան բ) Ազատ մանկան տունը Կ. Վէնցելի, 23) **Կենսագրական** ա) Մատթէոս II, կաթողիկոս Ամենայն Հայոց, բ) Մինաս Չերազ, 24) **Առևտրա-Արդիւնաբերական** ա) Ընդհանուր տեղեկ. բ) Առևտրական և ֆինանսական հաստատութիւններ, գ) Դիւղական բանկեր, Ս. Ղազարեան գ) Հարկեր և տուրքեր, ե) Պարտադրութեան հարկեր, զ) Նոտարական ծախսեր, է) Մուրհակի մասին, ը) Պարտաթուղթ, թ) Պահպանութեան թուղթ, ժ) Տուգանքի թուղթ, ի) Կանխավճարի մասին, լ) Նամ. 25) **Փոստ.** (Կանոնագր. Նորագոյն հրատարակ։ Այս տարի վերցրւած է միայն ներքին յարաբերութիւնը լիակատար (45 երես) մանրամասն տեղեկութեամբ և ցուցակներով։ 26) **Անեկդոտ**, 27) **Զւարճալիք** ա) Զւարճալի խնդիրներ. բ) Ինչպէս գտնել մէկի տարիքը, գ) Տանտիկնոջ անյաջող փորձ (ալյանի խաղեր), 28) Մոլը, Վ. Փափազեան։ 29) **Սատիրաներ** 30) Արհեստակցական։
Յաւելւած. **ՌՈՒՍԱՀԱՅ-ԴՐՈՂՆԵՐ**, գեղեցիկ թղթի վրայ, 64 երես, համառօտ կենսագրական բնորոշ յօդւածներով։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Օտար քաղաքացիներին 20% զեղչ և փոստի ծախսը մեզ վրայ։
Դիմել Тифлисъ, Типографія „Эпоха“ В. Варданянц.

Մանուֆակտուրային վաճառք

МАНУФАКТУРН. магазинъ — **ՅՈՎ. ԳՐ. ԿԱՃԿԱՃԵԱՆԻ** — И. Г. КАЧКАЧЕВА Сололакск. ул. № 4

Հոկտեմբերի 20-ից, Սոլոլակսկայա փողոցի վրայ, «Պրօֆօդնիկ ընկ.» խանութի շարքում, Ազօվ-Դօնեան բանկի ներքեւում, (Ամիրաղեանի նախկին խանութի տեղը) բացւած է մանուֆակտուրայի ապրանքների ՎԱՃԱՌՔ։ Ստացւած են մեծ քանակութեամբ աշնան նորութիւններ, այն է՝ մետաքսէ, բրդէ, մահուդէ, բամբակէ և բոլոր զարդական հիւսուածքների պաշտօնազգեստների կտորներ, աշակերտական ամենալաւ տեսակի մահուդ և զանազան պլէդներ՝

**ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ**

Բրդէ շալեր, պլիշի, բայկի, պիկէ, ատլասի և Քաշմիրի վերմակներ։

**ԲԱԹԱՆԷ ԱՊՐԱՆՔ ԵՒ ՍԵՂԱՆԱՏԱՆ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ**

ամենալաւ ֆաբրիկաների, զարդերի տիւլ, պլիշի սփռոցներ, թաւիշ, պլիւշ և մանչեստր։ Բազմաթիւ գոյներ։ Սատին, բատիստ, բումազէյ, նանսուկ և չիթ։ Բամբակէ գործւածքներ՝ սպիտակ և գունաւոր՝ սպիտակեղէնի համար և յայտնի ֆաբրիկաների սաւաններ։ Բայկա և ֆլանէլ՝ գունաւոր և սպիտակ։ Արշինով վաճառքը մեծաքանակ վաճառքի գնով։

ՎԱՃԱՌՔԸ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐ

**Ա Ռ Ա Ն Ց  Ս Ա Կ Ա Ր Կ Ո Ւ Թ Ե Ա Ն**

—o— ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ —o— 20—3



1910 թւի համար

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**„ԳՒՂԱՏՆՏԵՍ“**

Պատկերազարդ շաբաթաթերթի (Բ տարի

«ԳՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը. Երկրագործութիւն։ Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն։ Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն։ Այգեգործութիւն և գինեգործութիւն։ Ցանովի բոյսերի մշակութիւն։ Մեղւաբուծութիւն և շերամապահութիւն։ Բանջարաբուծութիւն։ Թռչնապահութիւն։ Կօօպերացիա և սպառողական ընկերութիւններ։ Գիւղատնտեսական նորութիւններ։ Գիւղատնտեսակեանք։ Դրախօսութիւն։ Թղթակցութիւններ։ Տնայնագործութիւն և տնարարութիւն։ Հարց և պատասխաններ։ Զանազանք և յայտարարութիւններ։

Առաջիկայ 1910 թւին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև թիւրքահայ գիւղատնտեսներ։

«Գիւղատնտես» 1910 թւի իր տարեկան բաժանորդներին թերթի համարներից դուրս տալու է որպէս նւէր՝

ՀԱՑԱԲՈՅՍԵՐԻ ԵՒ ԽՈՏԱԲՈՅՍԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ

Բաժնեգինը։

| Ռուսաստանում | | Արտասահմանում | |
|---|---|---|---|
| Տարին . . . | 3 ռուբլի | Տարին . | 4 ռուբլի (12 ֆրանկ) |
| Կէս տարին . . | 2 ռուբլի | Կէս տարին | 2 ր. 50 կ. (7 ֆրանկ) |

Մեր հասցէն՝ Тифлисъ. Редакція «Гюхатнтесъ».



МАГАЗИНЪ

Композиція

Тифлисъ, Пушкинскій пассажъ № 8



**Громадная экономія**

шведскаго композиціон. бѣля.

**Носится не менѣе двухъ лѣтъ**

Постоянный большой выборъ свѣжаго товара

**Воротниковъ, манишекъ и манжетъ.**

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

**по фабричнымъ цѣнамъ**

передѣлка въ любой фасонъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА 30—18



Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



**ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ**

(Պուշկինեան փող. տուն Սանդուխեանի, վրաց սեմինարիայի դիմաց)

Ամեն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ

ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՐԹ

Ունենք մեծ քանակութեամբ թարթի դօշ, Դօնի և տեղական բալիկ, ճիպա ցալձվալա, եանի և այլն։

ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԻԱՐ

Կովկասեան և արտասահմանեան ձկնային կոնսերւներ Գները ամենաչափաւոր։ 20—10



**„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“-Ը**

այժմս լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ

կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ։



Հեռախօս № 258

Հեռախօս № 258




# ՊԱՐԻԶԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

## ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏԻ

# „ԵՂԲ. ՍԱՓԱՐԵԱՆՑ և ՏԷՐ-ՍԱՀԱԿՈՎ"

ԳՈԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՈՍՊԵԿՏ

### ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԲԱԳՈՒՈՒՄ

Սեզօնի համար ստացուած է մեծ քանակութեամբ տղամարդկանց, կանանց և երեխաների պատրաստ հագուստեղէն, զինուորական և քաղաքացիական պաշտօնեաների տարազներ, արական և իգական դպրոցների համազգեստ։
Պատուէրները կատարւում են փորձուած վարպետների հսկողութեամբ շուտ և ճշտութեամբ։ 10—4

ծխախոտի գործարանից՝

**Ն. Ի. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ և ՈՐԴ.**

ի վաճառ է հանած ՆՈՐ ՊԱՊԻՐՈՍ

«Товарищъ» 20 հատը 5 կոպ. (միջակ ձև)
«Дружба» 20 հատը 5 կոպ. (բարակ ձև)

Դիտողութիւն.—Ֆաբրիկական տունը վճռել է վաճառ հանել այդ պապիրոսները ամենահասարակ էտիկետներով, որպէսզի այդ կերպով հնարաւորութիւն լինի՝ պ. պ. ծխողներին, միշտ էլ լաւ յատկութեան և աժանագին համով ծխախոտ ընձեռել։

Ամեն տեղ էլ կարելի է պահանջել

Մեծ քանակութեամբ առած պատուէրները կը կատարուին ըստ չափու հնարաւորութեան։ 10—10

=== ԲԱՑՈՒԱԾ Է ===

Առաջիկայ 1910 թ. բաժանորդագրութիւնը

XXVIII — Տարի — **ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ** XXI Տարի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

ՊՐԷՄԻԱՆԵՐՆ ԵՆ

1) ՎԵՀԱՓԱՌ ՄԱՏԹԷՈՍ Բ. Կաթողիկոսի բազմագոյն, 2) Ս. Սահակի, 3) Ս. Մեսրոպի, 4) Միքայէլ Նալբանդեանի մեծադիր պատկերները, որ բաժանորդն ստանում է նոր տարւայ ՏԱՐԱԶԻ №-ի հետ։

1. ԱՂԲԻՒՐ դպրոցական աշակերտուհիների և աշակերտների համար տարեկան ՄԷԿ ՌՈՒԲԼԻ (1 ր.)։

5. ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ, Աղբիւրի Ակումբ, Ծանուցումներ և այլ միջնակարգ դպրոցների, հաստատութիւնների, գրադարանների և հասարակաց բաժանորդների համար՝ տարեկան 10 ր. Արտասահման 18 ր. կամ 50 ֆր.

Հասցէն՝ Тифлис, Редакція „АГБЮР-ТАРАЗ".

TIFLIS. (Caucase) Rédaction „AGBÜR-TARAZ"

### ՆՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ!!

Պուշկինեան պասաժ № 4—6

### ՄԻԱԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Յատուկ դերձակային պիտոյքների. Տղամարդկանց և կանանց զանազան կոճակների, մետաքսի և բրդի շերիտների, բամբակի և մետաքսի զանազանագոյն թելերի. ձև անելու չափեր, կաւիճ, մեքենայի իւղ, զանազան սուտաշներ, փունջեր (փիւոկիւլ) գալթաններ։ Այդտեղ էլ ընդունւում են պատուէրներ զանազան կտորներից շինող կոճակների, նոյնպէս ամեն տեսակ փայլեցուած ապրանքների. միապէս ստացւում են սեզօնի նորութիւններ։ Խնդրում եմ գնորդներին առանց ուշադրութեան չթողնել վաճառատունս և անձամբ համոզուել խանութիս մէջ։

Ապրանքների գները նշանակուած են ամենաէժան։

10—5 Մ. Գ. ԲԱԽՉԻՆԵԱՆՑ


«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԿՈՄՊԼԵԿՏՆԵՐ

ՓԱՌԱԿԱԶՄ

| | |
|---|---|
| 1906 թ. արժէ | 5 ռուբլի |
| 1907 թ. | 7 ր. — |
| 1908 թ. | 7 ր. — |

— Սիրել հրի, կեանքի մէջ կարելի է միմիայն մէկ անգամ և ոչ աւելի...

## ԳԻՒՂԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ
## ՕՐԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ



## ՄԵՐ ՇՆՈՐՀԱԼԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ

# Աւետիս Իսահակեանը

### ՄԻԱՑՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Ձմեռը ուզում է ապրել իր սեփական ջրաղացում)



Դարդս լացէք հաւեր, բադեր,
Այծեր, աքլոր ու ծտեր...
Դարդս լացէք կատու, բլբուլ
Դուք մնացիք ինձ ընկեր։

Մարդ կուզէի որ երգ երգեմ
Սրտիս դարդերը բանամ
Այ բլբուլի, վարդ, մեխակի
Գովքն ու էշխը մինչ ադամ։

Էլ մարդ չկայ, ընկեր չկայ.
Եարաս սիրտս ում ցոյց տամ.
Սրանց միջին խանդ կ'մնայ,
Որ նոր «Վէրք ու Երգեր» տամ։

## ՀԱՅԵՐԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ



—Սուս բալա ջան, թող որ բան լսենք, մի գլուխ խօ՛ս ես լալիս ու չարութիւն անում է։

Անհասարակ մեզանում՝ հայերը թատրոն չեն գնում, բայց երբ գնում են, այդ դէպքում ծծկեր մանուկներին էլ հետները են տանում, որոնք խիստ խանգարում են ներկայացմանը։